

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱՆ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Եւրոպայի մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 ւանդիմ



ՊԱՅՄԱՆՔ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Տ Ե

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ

չեմ տրոշիր

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԱՐ Պատ. բաժանորդներէն որ հաճին իրենց բաժնեգրինքը փութացնել, նկատելով թէ ներկայ տարիչընէն ութերորդ ամսոյն մէջ կը գտնուինք:

ՊՈՒԼԱՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Պատ. փոխանորդ Տ. Վահան Վ. Յակոբեանի Պուլկարիոյ սահմանը ոտք դրած օրէն ի վեր տաք կերպով կը յուզուի Պուլկարահայոց Առաջնորդութեան խնդիրը. ամէն հայաբնակ քաղաք իւր կարողութեան չափովը յանձն առաւ մասնակցել հաստատուելիք Առաջնորդարանի տարեկան ծախքին: Տ. Վահան վարդապետ առանց ուրիշ վերաբերու մատը դնելու և կիրքեր յուզելու՝ գիտցաւ իւր պաշտօնին սուղին և դժուարին մասը գլուխ հանել. այսինքն թէ՛ բոլոր Պուլկարահայոց հաճութիւնը ի մի համախմբել Առաջնորդութիւն մը հաստատուել համար և թէ՛ ասոր ծախքերը ապահովել:

Ձեռնարկը գործնական ճամբու մէջ դնելու համար, այս օրեր ամէն հայաբնակ քաղաք իւր պատգամաւորը ընտրելու վրայ է, և այդ պատգամաւորները Սփիւս գումարուելով պիտի ընտրեն Վիճակիս Առաջնորդը: Բայց Առաջնորդի մը ընտրութիւնը կամ բարձրաստիճան եկեղեցական մը պաշտօնապէս մեզի պետ ունենալը չէ որ մեր պետքերը պիտի գոհացնէ. մեզ պէտք եղածը սահմանադրական հիմանց վրայ վարչական կազմակերպութիւն մը հաստատելն է: Եթէ լոկ իցոյց օտար ազգաց վեղարաւոր մը ունենալ և մերթ անմարտելի քարոզներ լսել ըլլար մեր բաղձանքը, այդ դուռն ամենամեծ յիմարութիւնը պիտի ըլլար. եթէ մեր եկեղեցական, կրթական և ազգային գործերը միմիայն եպիսկոպոսի մը կամ վարդապետի մը միապետական


վճարն յանձնել փափաքէինք, այդ ալ դարերով դէպի ետ երթալով ծիծաղելի սխալ մը պիտի ըլլար մեր կողմէ:

Մենք կղերականի մը ոչ ոք տող վեղարին սիրահարն ենք. ոչ աւոր խնամուած մորուքին և ոչ ալ Առաջնորդ մը անպատճառ ունեցած ըլլալու ցուցամուրթեան են. թակալ ենք. Մենք կուզենք ունենալ սահմանադրապէս ընտրուած վարչական ժողովներէ շրջապատեալ Առաջնորդ մը. և երբէք օգտակար չենք նկատեր կղերականի մը միապետութեանը յանձնել մեր ազգային գործերը:

Հետեւաբար Սփիւս գումարուելիք Պատգամ. Ժողովին գլխաւոր գործը ըլլալու է սահմանադրութիւն մը գծել, եւ հոն սահմանել Առաջնորդին իրաւասութիւնները, պատասխանատուութիւնը, ժողովականներու եւ ժողովուրդին իրաւունքները ու պարտքերը, թաղականներու եւ հոգաբարձութեանց պատասխանատուութիւնները ուղղակի ազգային Առաջնորդարանին, որուն մէջ գտնուին կրօնական, կրթական եւ այլ ազգային խնդիրներ քննելու, որոշելու ու վճռելու ձեռնհաս մարմիններ կամ ժողովներ որոնց որոշումները միայն գործադրութեան դնելու իրաւունքը վերապահուած ըլլալ օրուան Առաջնորդին: Ահա այս օրինակ կատարելով մեզ պէտք է անպատճառ Առաջնորդ մը ընտրելու առաջարկին: Առանց այդ կազմակերպութեան անկատար կ'ըլլայ առաջնորդութեան հաստատութիւնը:

Հետեւապէս ընտրուելիք պատգամաւորները պէտք է մեր էն կարող եւ զարգացած անձնաւորութիւնները ըլլան. ասոնք լոկ Առաջնորդ մը չէ որ պիտի ընտրեն այլ օրէնսդիրի պաշտօն ալ պիտի կատարեն որուն համար կարգ մը հմտութիւններ եւ փորձ ունենալ պիտի հարկաւոր է:

ԿՈՎԿԱՍՏԱՆԿՈՑ ՌՈՒՍԱՅՈՒՄՐ



Ս. ԲԵԴՐՍՊՈՒՐԿ, 30 յուլիս

Կը փութամ ձեզ իմացնելու որ ևս կառավարութեան մէկ նոր հարուածը, Ռուսիոյ հայկական եկեղեցիին դէմ, եւ ձեզ բացատրելու նոր յափշտակութիւն մը:

Անշուշտ կը յիշէք թէ որ ևս կառավարութիւնը փակեց 400 հայ վարժարաններ, ուր հայ լեզուն եւ հայ կրօնը կուսուցանէին հայ տղայացի: Այս բոլոր վարժարանները իրենց գոյութիւնը կը պարտէին այն դրամական օգնութեանց զորս հայ եկեղեցիները կը նուիրէին: Իսկ արդ, որ ևս կառավարութիւնը փակելով հայ վարժարանները ուզեց զանոնք վերադարձնել հայ եկեղեցիներու ծախքովը ոչ թէ հայ տղայոց համար, այլ նաեւ որ ևս, Վրացի, թուրք տղոց համար. այսինքն կառավարութիւնը ուզեց որ ևս վարժարաններ ունենալ, բայց հայ եկեղեցիներու դրամովը: Կաթողիկոսը չէ համակերպեցաւ այդ օրինակ անօրէն պահանջի մը, մասնաւոր թէ այս վարժարաններու մէջ որ ևս կառավարութիւնը չէր ուզեր առաջնորդին տալ հայկական լեզուին: Հետեւաբար, հայ կղերականութիւնը չէր ուզեր որ որ ևս անցումը գլուխ քրտուի հայ եկեղեցիներու ծախքովը: Ուստի իշխան Կաթողիկոսի կառավարութիւնը բիրտ ուժ գործածեց ևս հայ եկեղեցիներու սեփականութիւնները գրաւեց:

Հայկական եկեղեցիները դատարաններու դիմեցին ըստ Զարի հրամանին եւ արտօնութեանը: Ռուս դատարանները հայ եկեղեցիներու իրաւունքը շատ օրինաւոր եւ արդար գտան եւ հրամայեցին իշխան Կաթողիկոսի հայ եկեղեցիներուն վերադարձնել ապօրինի եւ ընդունելով դրամաւոր բոլոր սեփականութիւնները:

Իշխան Կաթողիկոս տեսնելով որ չէր կրնար յաջողցնել իւր ծրարութիւնը, Բեզարտուրի դիմեց եւ ահաւասիկ նախարարական Յանձնախումբը Նիքոլա Բ. կայսեր ստորագրել տուաւ յունիս 13ին հրովարտակ մը՝ որ միայն յուլիս 14ին հրատարակուեցաւ, որով կայսրը կը հրամայէ հայ եկեղեցիներէն գրաւել ինչ որ ունին, սեփականութիւն, շարժական եւ անշարժ գոյք, հրամայելու եւ այլն, եւ զանոնք յանձնել ներքին գործոց նախարարին որ պիտի կառավարէ այդ սեփականութիւնները եւ անոնց հասոյթները պիտի յատկացնէ վերոյիշեալ վարժարաններուն եւ աւելցած պիտի տայ եկեղեցիներուն: Այս կանոնէն բացառութիւն չեն կազմեր Հայոց կրօնական վարժարաններն, մասնաւոր Տրի-

դիսի Ներսէսեան վարժարանը որ մեծ հարստութիւն ունի: Կայսրական հրովարտակին մէջ կըսուի թէ հայ կղերականութիւնը իւր սեփականութեան իրաւունքը չը կորսնցնէր, բայց այս ձեւը յափշտակութեան աղղկեցութիւնը մեղմոցնելու նպատակաւ յօրինուած է: Մէկ հարուածով որ ևս կառավարութիւնը կը գրաւէ հայ եկեղեցիներու սեփականութիւնները որոնք հարկաւոր, հազարաւոր տարիներէ ի վեր իրենց կը պատկանին. այնպէս որ այդ բոլոր սեփականութիւնները նուէրներ են հայ թագաւորներու եւ իշխաններու եւ նոյնիկ թուրք եւ պարսիկ կառավարութեանց եւ դորս ոչ ձէնկիկ-նաներ, ոչ Լաւկ-թիմուրներ չեն համարձակած Հայերէն դրամներու:

(ԲՐՕ-ՍՐՄԷԻՆԱ)

ՍԱԿԵՂՈՍԱԿԱՆ ԱՊՍՏԱՄՐՈՒԹԻՒՆԸ

Օգոստոս 14 թուականաւ: Սեւանիկէ եւրոպական կարեւոր օրաթերթի մը տողացած մասնաւոր նամակէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները: «Ներքին կազմակերպութեան» Յանձնախումբը իւր յեղափոխական գործը առաջ կը տանի ամբողջ Մանասթըրի նահանգին մէջ մեծ գործունէութեամբ մը եւ արտակարգ յաջողութեամբ:

Բոլոր լեռնային մասը՝ որ Տէպլէէ կը սկսի (Մանասթըրի հիւսիսային սահմանաւորէն) եւ կիւրկարի մինչեւ Գօլանի, ապստամբներու ձեռքը կը գտնուի: Արդէն ամբողջ Մանասթըրի նահանգը արկածեալ է եւ մեծ յաջողութիւններ կրնան յաջողեցնել տպաւորական ուժին ընդդէմ գործելուն, որոնք երկիրը լաւ չի ճանչնալով, ամէն դժուարութեանց կը հանդիպին:

Նախ կը կարծուէր թէ ապստամբութիւնը մարած եւ վերջացած է կարճ ժամանակի մը մէջ, մինչդեռ ան մոխրին տակ կարծարծուի եղեր եւ յեղափոխական Յանձնախումբը կը պատրաստէ եղեր իւր գործը յամառութեամբ:

Անոնք որ մակեդոնական յեղափոխութեան յեղաշրջութեան հետեւած են կրնան այսօր նշմարել թէ արդի ապստամբութեան վառարանները պուլկար տարրին մեծամասնութիւն կազմած վայրերն են, Բօթօ, Մէնէլիկ, Նէվրօքս եւ Ճուլա-Պալա, ուր միշտ շարժում կայ: Գործունէութեան զաշտը փոխուած է եւ անկասկած ապստամբական նոր կիւրքները պատրաստուած են առատ զէնքերով եւ մթերքներով:

Մարաշանո Էմէր Բուշտի փաշան՝ որ գլխավոր հրամանատար կարգուած է Մակեդոնիոյ բանակին, դժուարին գործի մը կոչուած է։ Շատ կասկածելի է որ իր ձեռնարկին մէջ յաջողի։ Իրեն բազմաթիւ եւ քաջամարտ փաշաներ պիտի ըլլան տակաւու համար ընթացական կռիւներու երկար եւ սուղի նստող շարքի մը։

Ապստամբները աւելի քան 126 պուլ-կար գիւղերու վրայ կանգնեցուցած են ապստամբութեան դրօշը եւ գրաւած են երկաթուղիներու վրայ հրակող բարձունքները։ Չէնքին բաղդը ուժեղանալի ասպետներուն նպատակաւ եղաւ, եւ այս առաջին յաջողութիւնը խնդր Մակեդոնացւոց մընքը հրապուրեց։

Ինքնաթիւն գիւղեր պարպուեցան, որոնց բնակիչները յեղափոխականներուն համակերպեցան ու յորձակեցան։ Սյոք գիւղերը այսօր անապատներ են, տղաքները եւ ծերերը ապստամբներու միջին պաշտպանութեան տակ են, պիտի որ զարդն ուսուստ եւ պաշար պատրաստելով, նաեւ վրաւորակները կը խնամեն։

Սըր ժամը շնչէ եւ բոլոր խումբերը գէտ դիմաց գան թուրք զօրաց շնա էն ողբերգական դէպքերն սո որ վրայ պարս հասնին։

Ապստամբները միշտ ի վրձակի պըտէ ըլլան կամաւ գամ բուռնութեամբ բընեց պիտի խնդները պաշտպանելու համար։ Սե մասնաւոր ինչ այս պատերազմը ապստամբները բոլորովն մարնելու նպատակաւ պարս ձեռնարկուր։

Ապստամբներու դրօշը կը ծածանի Դուշուպայի վրայ. քաղաքը գրաւեալու համար զրկուած 4000 զինուորական մեծ զորուստ կընցին։

Ապստամբները յաղթականօրէն ետ մղեցին բոլոր յարձակումները եւ կը պահեն զիրենք շատ նպատակաւոր կերպով։

Սանաթըլէն Նիքիտա երկաթուծամբուն վրայ երկաթուղիի չորս կամուրջներ քանդեցին։ Եւ գաւառին կը տիրեն։ զօրքը տակաւին հոն գործողութեանց չէ սկսած։

Բրուշուպէ յետոյ ապստամբներու ապահով տիրապետութեան տակ կը գտնուին Գաստորիա եւ Օհրիտ գաւառները։

Առաջինին մէջ չատ Յոյներու գիւղեր կան, որոնք շատ հալածուեցան ապստամբներէն. որովհետեւ Յոյները փոխանակ ասոնց դործակցելու թուրքերուն կը լրտեսէին։

Ապստամբները՝ որ երկաթուղիները ազատ չեն ձգեր, ամսոյս 12ի գիշերը յարձակեցան Էքսիտուի կայարանին վրայ։ Հոն հրացանաձգութիւն մը սկսաւ ու տեւեց մինչեւ առաւօտ։ Բայց կայարանը ապստամբներու ձեռքը չանցաւ։

Սեղանիկ-Մանսիլը գծին վրայ գտնուող կիւմէնէ փոքր քաղաքի պուլկար բնակիչները, որ եղբայրացած էին ապստամբներուն, յանկարծ ամսոյս 11ի գիշերը թիւրք պահակներուն վրայ ուժանակի աւերներ նետեցին, տաք ընդհարում մը սկսաւ, թաղը կողոպտուեցաւ, բայց չը հասկցուիր թէ ինչպէս բնակիչները անյայտացան։

Ճամբու վրայ ընդհարումներ պատահեցան զօրաց մէջ, որոնք գիշերը հրացաններ արձակեցին։ Կրտսեր նաեւ, (բայց շատ վերապահութեամբ), թէ տարօրինակ պիտի հասկացողութեամբ մը, երկու թուրք զօրագուհիք խիտ լուռ կուտի մը բռնուեցան իրարու հետ զերար ապստամբ կարծելով առանց հասկնալու թէ միեւնոյն զօրաբաժնին կը պատկանին։ 150 մեռեալ կայ կըսեն։

Ուրիշ տեղեր ալ ապստամբները յաղթող եղած են զօրքերուն դէմ։ Մեծ կռիւ մը տեղի ունեցաւ Օհրիտայի մէջ. բայց ստոյգ տեղեկութիւններ կը պակասին։

Երկաթուղիի կամուրջները միշտ ուժանակով աւերուելու ենթակայ են։ Երէկ իրիկուն 15 մէթրօ երկարութիւն ունեցող կամուրջ մը ուժանակով քանդուեցաւ Կէպէլի մօտ. քել լոմէթր 187։

Կացութիւնը խիստ ծանր է. եւ մեծ պատահարներ կը վախճուի եթէ զօրքերը չը յաջողին ապստամբները ճգնելու եւ զստնալ ստիպելու որ իրենց դիրքերը վար դնեն։

ՄԱՍՈՒՆԻ ՇՈՒՐՁԸ

ՌՈՒՍ ԷԱՅ ԿԱԼՈՒԱՆԵՐԸ

Ուղղահանդակի մէջ կը կարգուիք.

Երէկ Յուլիս 30 թուականով նամակ մը առինք Տփղիսէ, ուրկէ կը տեղեկանանք թէ Ռուսահայ եկեղեցիներու գրաւեալ կալուածներու մասին ցարդ Մայր Աթոռէն ձեռնհաս իշխանութեան մօտ դիմում ըլլալու մասին ու եւ տեղեկութիւն չկայ։ Տփղիսի ամէնէն բանիմաց մասը խորագէտ ազդուած, որոշեց է դիմել Ս. Կաթողիկոսին, յայտնելով որ եթէ այս ուղղութեան մէջ միայ իրաց վիճակը եւ եկեղեցւոյ իրաւունքը չվերահաստատուի՝ «իրանք իրանց զերծ են նկատում Մայր Աթոռի հոգեւոր վերին իրաւասութիւնից, եւ ոչ մի կողմէ չնուրբելով Ռուսաստանում գտնուող Հայ հիմնարկութիւններին»։ Յամենայն դէպս Ռուսահայերը որոնք իրենց եկեղեցական իրաւանց պաշտպանութեան այնքան նախանձախիղիւ կերեւան, բնական է որ իմաստութեամբ կը շարժին, հրաւիրելով միշտ Մայր Աթոռի պետին ու շարքութեանը իրաց վիճակին վրայ, որ իրաւամբ շատ անախտ եւ ցաւալի վիճակ մը ստացած է։ Միւս կողմէ կը լսուի որ այս օրերս մեծ համագումար եկեղեցական ժողով մը պիտի գումարուի Ս. Էջմիածնի մէջ եւ բոլոր գաւառաց առաջնորդները, փոխառաջնորդները ու աւագներէնցները համախմբուելով պիտի խորհրդակցին Ռուս կառավարութեան նոր հրամանագրին վրայ եւ ըլլալիք դիմումին ձեւը պիտի որոշեն։ Այս տեղեկութիւնն ալ մասնաւոր բան մըն է եւ Ս. Կաթողիկոսին կողմէ այս նըպատակաւ ժողով հրաւիրելու մասին վաւերական տեղեկութիւն կը պակասուի։ Ռուսահայ վարժարաններուն կրթական նախարարութեան իրաւասութեան տակ մասնէն ի վեր ոչ մէկ կտակ եւ նուէր եղած է այդ զբաղողներուն, հիմա ալ եկեղեցիներու եւ վանքերու կտակ ըլլալը սկսիք է դադարել եւ այս օրերս բարեւելք անձ մը 150 հազար ռուպլի կտակած ըլլալով Ս. Էջմիածնի, այս անգամ եկեղեցական եւ վանական կալուածներու գրաւման լուրերն վրայ, իր կապը չեղեալ համարեալ հաւանք է եւ նոսարի թէ այդ գումարը Ստոյ վանքին պիտի նուիրէ նոյն բարեսէր անձը։

Միւսին, այս անգամ եկեղեցական եւ վանական կալուածներու գրաւման լուրերն վրայ, իր կապը չեղեալ համարեալ է եւ նոսարի միջոցով անվաւեր հոչակեր է։ Կրտսեր թէ այդ գումարը Ստոյ վանքին պիտի նուիրէ նոյն բարեսէր անձը։

ԵՐՈՒՍԱԼԱՅԻ ԳՈՐԾԵՐ

Նախընթաց օր Խառն Ժողովոյ մէջ որոշուեցաւ անմիջապէս իմացնել Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարքին, որ վանքին ելեւմտից տեսուչ Տ. Ղեւոնդ Վ. Մարգարտեանը, ինչպէս նաեւ բողոքողներէն վաղեմի միաբան Տ. Յակոբ Վ. Սանասարեան, թարգման Տ. Սարգիս Վ. Սճէման եւ Դաւիթ Վ. Տէրաշեան Պոլիս զրկուին սրպէս զի վանքին ելեւմտական եւ հաշուական գործերուն քննութիւնը կատարուի վարչութեան միջոցաւ։ Խառն Ժողովը որոշեց նաեւ իմացնել Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին որ նորոնորէ Լուսարարական Տ. Վահրամ Վ. չձեռնարկէ իր պաշտօնին, մինչեւ որ այդ մասին քննութիւն կատարուի։ Ս. Պատրիարքը Յուլիս 26 թուով հետագիր մը ուղղած էր Երուսաղէմ, Լուսարարական ընտրութեան դէմ բողոքող վարդապետներու, երէկուան թղթաբերով Ս. Պատրիարքին զրկուած էր 17 միաբաններու ստորագրութեամբ նամակ մը, որուն մէջ ստորագրողները կըսեն թէ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը անհանգիստ ընկելով դիրքի մէջ չեն գտնուած բնաւ։ «Հակառակորդներու յերկուսնքներ ըլլալ կը թուին առնալ, զի ինչպէս կը նկատենք, մեր բանաւոր խնդիրները եւ պահանջները անկարող ըլլալով, օրինական կերպով լսելու ու պատասխանելու, մեզ լռութեան դատարարելու համար միջոցներու մէջ բնաւ խտրութիւն չի գործուի»։ Այս նամակին մէջ նորոնորէ Լուսարարական տեղի նկատմամբ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին ուղղուած երկու բողոքողներէնցներու պատճէններ կան, իւր նամակին մէջ յիշուած է նաեւ որ հին միաբաններէն Յոսէփէ տեսուչ Տ. Մատթէոս Վ. Կայրգեան, Վսեմ Կաթողիկէ Է. Նորատունկեանի զրկած մէկ նամակին մէջ այս խնդրոյն վրայ հարկ

ԻՐԻՍՔԵ ՊՈՐԷՑ

Ռուսմական, հայրենասէր եւ քաջ պատերազմող զօրապետ. ծնաւ ագնուական ընտանիքէ, 1841 օգոստոս 3ին Արեւիկան Բուսթիլի Գալօֆէր գիւղաքաղաքին մէջ։ Սուրա յիշատակն ալ կը յարգեն Պուլկարք մինչեւ ցայսօր։

1876 ապրիլ ամսոյ 20ին, Արեւիկան Բուսթիլի Գիւստերա եւ Գորբիվշտիցա գաւառի Պուլկարք ապստամբեցան Օսմանեան պետութեան դէմ. այս յեղափոխութիւնը գրեթէ մէկ ամիս տեւեց։ Պոթէֆ ալ կուգէր Դանուրը անցնել եւ մի քանի հազար հոգիներով երթալ Պալքանը գրաւել եւ յետոյ միանալ Գիւստերա եւ Գորբիվշտիցայի ասպատակ խումբերուն հետ։ Պոթէֆ այն թուականին Ռոմանիոյ Ճուրճէվօ (Ենթիլէօյ) քաղաքը կը գտնուէր եւ Վրացայի խումբերէ նամակի կապաւոր. երկու օր վերջը զաղտնի թղթատար մը ուղղակի իւր տիրոջ (Պոթէֆի) սնանակը իջաւ եւ նամակ յանձնեց նորա։ Պոթէֆ անմիջապէս իւր մտերիները կոչելով, զրպանէն հանգ կընքալ նամակը եւ սկսաւ կարգալ հետեւեալը.

«Եղբարք իմ Ազատարար Պուլկարի, ի քաղաքի Ճուրճէվօ (Ռոմանիա)։

«Նախ եւ առաջ բարեկամողութիւն կը խնդրեմ Սոմնական Սարգիսն որ անմիջապէս միանալ անյաղթելի զօրութեամբ։

Չեք բոլոր հրամաններն ամենայն փութով կատարեցինք. ամեն ինչ պատրաստ է, մի միայն ձեր գաւառստան կը սպասեմք անհամբեր։ Մեր երկրի բար-

բարոսք այս օրերս աւելի եւս սաստկացուցին քրիստոնէից դէմ չարագործութիւնները. գրեթէ բոլոր Պալքանեան Պուլկար ժողովուրդը արտասուածք եւ արեւան մէջ կը լողան. ձեր գալուստը պիտի փրկէ մեզ, մեր գիւղերու քրիստոնէական անդադար Պոթէֆ կաղաղակեն. մի քանի օր առաջ Պալքանի չրջակայ Սթուրից, Թիփիլիցա, Կալաթին եւ Կլոմէնի գիւղերն Ձերքէզք այրելով ժողովրդաբնակներն. մինչեւ իսկ նորածին մանկանց գլուխներու վրայ անգութ Ձերքէզներու գաշտը չողաց։ Ըստ հրամանի ձեւում, այժմ Վրացայի անտառին մէջ դէպի հարաւային կողմը երեք հարիւրի մօտ զինուոր Պուլկար անձնուրացները պատրաստ պիտի գտնուէր եւ գործէալ աւերակեան կողմը Լօֆչա քաղաքէ երկու ժամ հեռի, Տըրքանօ գիւղի անտառին մէջ պիտի միանալ հազարի չափ Պուլկարաց, որոց ամենքն ալ երգունցած են մինչեւ վերջին չուչի պատերազմի Տաճկաց դէմ, ձեր հրամանատարութեան ներքեւ։ Սա այժմ մեր կողմերը հազարի չափ (մէկ թաղաւր) Օսմանեան զօրք կը գտնուի. թնդանօթ չուչին իրենց հետ եւ այժմ Լօֆչա քաղաքի մէջ ալ երկու բանակ (մէկ բանակ 800 հոգի) զօրք կը գտնուի որոնք մի քանի օր առաջ Բլէվլանէն գնացին։

Գործակատար Վ. ՊԱԼԿԱՆՔԻ

1 մայիս 1876, Վրացա Պոթէֆ վերադառնալ արտաշարք նամակը կարգալէ յետոյ իւր մտերիները կը հրաւիրէ նոյն գիշերը խորհրդակցելով վերջին որոշում մը տալու։ Հաղիւ կէս գիշերուան ժամը (Ը. Ե.) 9 կը հնչէր, Ճուրճէվօ քաղաքի Ըսթրաւա Լիֆիսքա վուդից թիւ

185 տան մէջ Յիզակիոսական ընկերութեան անդամք բոլորն ալ ներկայ էին։ Առեւտր բացուեցաւ նախագահութեամբ Նիքիթօ Պոթէֆի. խորհրդակցութիւնը տեւեց մինչեւ ծագումն արեւու. վերջապէս որոշուեցաւ մայիս 1ին Ռոմանիան անցնել Պուլկարիս եւ արդէն Ռուսիցի անուն տաւոր-հուշագրական շարժումը նոյն օրը Ռոմանիոյ բոլոր նաւահանգիստները հանդիպելով ճամբորդ պիտի առնուէր։ Ռուսիցի լաւ պիտի նպատակէր Պոթէֆի խումբին, քանզի Դանուր գետի վրայ երթեւեկող ամենէն մեծ եւ քիտիք չորհանաւներէն մին էր Ռուսիցի։

Պոթէֆի խումբը 300 հոգիէ կը բաղկանար. նոցա 80ը միայն պիտի թողուէր իւր մօտ եւ միացնալ 220ը ալ եւ ալ նաւահանգիստները պիտի բաժնէր որոնք միեւնոյն օրը պիտի մանէին չորհնաւ, այնպէս որ Ռոման կառավարութիւնն ալ կասկածելով բան մը չպիտի գուշակէր. բայց եթէ այդ 300 անձինք մէկ նաւահանգիստ չորհնաւ մանէին, այն ատեն թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ Ռուսիցիի նաւապետն պիտի հասկնային զորքը, քանզի եւ ոչ մէկ անգամ այդչափ բազմութիւն չէր պատահած։ Մայիս 16ին չորհնաւն Կալաքէ ճամբայ կ'ընէր արդէն. նոյն գիշերը Պալքան ժամանեց. անդ Պոթէֆի արքանականներէն 36 հոգի իրենց անցադիրը կարգաւ ցոյց տալով տեղական կառավարութեան պաշտօնէից, իրենց պատերազմական զօրքներով միասինք անվտանգ մասն չորհնաւ. չորհնաւը հասաւ Գալաթայ, անկէց ալ մասն 24 հոգի. Օթթէնիցէն 26, Ճուրճէվօն 80, Պոթէֆի հետ միասինք 25, Թուրքա Մօ-կորէզէն 60, Գոսպիլան 30 եւ վերջին նաւահանգիստէն Բլեթի 24. Ընդամենը 300 հոգի ամբողջապէս։

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ԱԶ ԿԵ ԿԱՐԴԱՆՔԻ

Ապրիլ 18—ՎԵՐ. Հայրապետի ապրիլ 5ին Սինդիկատի ուղղած կոնդակի համաձայն՝ նախ՝ պատուիրել Մայր Աթոռի գանձապահին արտաքին նախահայտի բանալ վարկ առ այժմ մի հազար բոլորի եւ տալ Միւսոնօրհնութեան համագէտի համար կազմուած կարգադրել մասնաժողովին։ Երկրորդ՝ պատուիրել մասնաժողովին, այժմէն իսկ հոգալ ինչպէս Ս. Միւսոնի նիւթերի համար, նոյնպէս եւ հիւրերի, այցելուները եւ ուխտաւորները կանոնաւոր ընդունելութեան կարեւոր պատրաստութիւններ տեսնելու համար։

— Պազուրի բանտին մէջ 150 բանտարկեալներ կան որոնք վերջին գործադուլի խռովութեանց պատճառաւ ձերբակալուած են։ ասոնց մէկ կարեւոր մասը հայեր կը կազմեն։

ՏՓՂԻՍԻ քաղաքապետութեան մասնակարարուած 18 վարժարանները անցեալ տարի 2,130 աշակերտ ունեցած են, որոնց 840ը Ռուս, 683ը Հայ, 550ը Վրացի, 39ը Թուրք, Հըրեայ եւ 12ը ուրիշ ազգերէ եղած են։

— Պոլսոյ Պատրիարքարանի Խառն ժողովը իր վերջին նիստին տեղակա նախով թէ եպիսկոպոսական դասը պատշաճ դիմումներու ձեռնարկած է Ռուս սահայ եկեղեցիներու կարեւորագոյն մասնաւոր, գոհունակութիւն յայտնեց եւ պարտաւոր համարեց ինքզինքը ի պահանջել հանկին օգնելու իր կողմէ այն ձեռնարկներու արդիւնաւոր մասն համար։

— ՊԵՆԷՃԻԻ առաջնորդ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրի, քննարկ կը Գէկնի իր թեմը, հակառակ իրեն թեր ու գէժ գրութիւններու որ վերջերս հասան Պատրիարքարան եւ թերթերուն։

— ՏՓՂԻՍԻ մէջ հրատարակուող գրական-գեղարուեստական ԹԱՏՏՈՆ ժողովածուի խմբագիր Ալեքսանտր Թարխանեան սպաննուած է Պաթմուի մէջ յուլիս 29 ին երկու հայերու ձեռքով։ Այս սպանման պատճառ ցոյց կը տրուի թէ Թարխանեան իրմէ զբաւ պահանջ

եղած բացատրութիւնը եւ լուսարանութիւնը հաղորդած է։ Երբեք աղէմէն կը տեղեկացնեն դարձեալ թէ ժողովուրդը վաւերաց վարժարանի տեսուչ Տ. Եղիշէ Մ. Վ. Չիլին՝ իրեն, մէկ քանի օր առաջ Միւսոնօրհնութեան մէջ յայտարարելու է թէ անհրաժեշտ է որ այլեւս հայերը ներկայացուին։ Ինչպէս երեւցաւ Խառն ժողովոյ որոշումներէն, Վստ. Գարբիէլէ Էֆ. Նոր. տունիկեանի նման Ս. Երեւանի իրաւանց նախահայտի խնդիր, արդարակոչով եւ օրինասէր անձնաւորութեան մի առաջարկութեան վրայ, որուն ոյժ տուած են նաեւ Իր. Բոն. եւ Գաղաշ. Ժողովոց անդամներէն ոմանք, Խառն ժողովը հարկ տեսաւ թէ քննութիւն մը կատարելու է թէ հայերէնը պահանջել։

ՆԵՐԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԻԵՆՆԱ, 22 Օգոստոս

Բոլիթիշի Կոռնս. Թերթը պաշտօնական աղբիւրէ անուելով կրէ թէ Ռուս նաւատորմի թուրքոյ ջուրերուն մէջ ներկայութիւնը նոյն իսկ անցաւոր անհամաձայնութեան մը նշանը չէ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ։

Եթէ Ռուսիա այս տարի Թուրքիոյ չընդրէ կը զրկէ իր Սև ծովի արմիղին մէկ մասը, ամեն տարի ալ այս եղանակին տեղափոխութիւններ կընէ, սա չը նշանակէր երբէք Արեւելքի մէջ Ռուսիոյ քաղաքականութեան փոփոխութիւն մը։ Ռուսիա, կրէ Բոլիթիշի Գորիսը. Աւստրո-Հունգարիոյ հետ կազմած բարենորոգմանց ծրագիրը նոյնը կը պահէ եւ այս ճամբով կուզէ միայն մտքերը հանգարտեցնել եւ Մակեդոնիոյ քրիստոնէից վիճակը ամփոքել։

Ըստ Բոլիթիշի Գորիսը ի Պրուգսէի մէկ թերթին հրատարակած այն լուրը թէ հաւանականաբար մէկ քանի պետութիւններ Թուրքիոյ հողէն դաւանալն կէտեր պիտի գրաւեն, լրջութեան հետք է եւ վիճարանել իսկ չարտեր։

Կ. ՊՈԼԻՍ, 22 Օգոստոս.

Թրքական աղբիւրէ տրուած տեղեկութեանց նայելով, Մակեդոնացի յեղափոխ. խումբերը Էտերնէի նահանգին Գրեքիլիսէ գաւառին մէջ շատ մը գիւղեր կողոպտած եւ այրած են։ Կտրած են հեռագրական թելը Էտերնէի եւ Գրեքիլիսէի միջեւ։ Գրեքիլիսէի սանձաղին մէջ տեղի ունեցող շարժումը կը կարծուի Ռուս նաւատորմի թուրք ջուրերու մէջ երեւանալու հետեւեալը լլլալ։ Նաւատորմի զին. յանձնարար. լուրը առիթ տալով յայտարարելու է թէ Մակեդոնիոյ ինքնապաշտ Ռուսիոյ միջամտութիւնն մէկ ազդեցոյցն է դա եւ վերջապէս պուրկար ժողովուրդը որ սկսած էր յուսահատուիլ, հաստատամտօրէն շարժումը շարունակելու սկսաւ։

Այն լուրը թէ Ռուս արմիղը Խիստա համեմուտ ողջունուած է Մակեդոնացի խումբերէն, որունք գրոշակ շարժած են, եւ որ իրարանցումի մը տեղի տուեր է, ստու է։ Տորմիղի հրամանատար Գրեքիլիսէի տեղեկագրին նայելով Խիստա ընտելեցնելը արմիղին առջեւ վազելով, բացի 25էն, խնդրած են նաեւ Ռուս մէջ մտնել։

Դուրսը կը ջանայ պարզ այցելութեան մը կերպարանք տալ Ռուս նաւատորմի զին. յանձնարար.։ Նաւ մը դուրկեց Խիստաի որ հոն հեռագրական կայարան մը հաստատէ։ Նոյն նաւը տարաւ նաեւ պտուղներ եւ ծխախոտ արմիղին նաւազնեւորուն համար։

Կ. ՊՈԼԻՍ, 22 Օգոստոս.

Այս վերջին օրերը, Պոլսոյ Ռուսական շոգ'նաւի պաշտօնեաներէն Խոտլացի մը Ռուսական գլխաւորով, կոչաւոր թշնամանուցաւ քա՛հ մը թուրք զինուորներէ եւ այն աստիճան ծնունդեւ որ հարկ եղաւ հիւանդանոց փոխադրել։

Խոտլական զեպանատունը բողոքադրէ մը տուաւ Դրան պահանջելով որ յանցաւորները պատժուին, պոռացում տրուի եւ միջոցներ ձեռք առնուին որ յատկապէս այգօր'նակ գէպերը չը կրկնուին։

Ռուս զեպանատունը եւս այս խնդրոյ համար Դրան բողոքեց, մատնանիլ ընելով թուրք ժողովուրդին գրգռումը, որուն մէջ կը տարածայնուի թէ Ռուս թուրքի հիւպատոսը որ սպաննուեցաւ, Հալիմը ինք գրգռած լլլայ։ Խոտլոյ հպատակ Ռուս պաշտօնակարի մը զէմ եղած գէպը թուրք ժողովուրդին այդ գրգռման հետեւանքն է։

Ռուս զեպանատունը պահանջեց Մանիսթըրի զինուորական գատարանին վճարարին հրատարակութիւնը։

Ըստ թրքական հաստատութեանց Ռուս գործակալութեան պաշտօնակարին վրայ յարձակող զինուորները փախած են։

Կիւստուլի թէ ուրիշ տեղեր ալ թուրք զօրքերը նոյն սպաննական ընթացքը կը բռնեն օտարահպատակներու դէմ։

Կ. ՊՈԼԻՍ, 22 Օգոստոս.

Ռուս եւ աւստրիական զեպանատանց Դանէն տրուած տեղեկութիւններուն համեմատ Օչիւրայի եւ Գրուշովայի գաւառներու շատ մը գիւղերը նաեւ Մանիսթըրի նահանգին մէջ հպատակութիւն յայտնած են եւ գէնքերն են յանձնած։ Շատ օրերէ ի վեր խումբերու եւ զօրաց մէջ ոչ մի ընդհարում տեղի ունեցած չէ։

ՀՌՈՍ, 21 Օգոստոս.

Արեւելեան ջուրերը Խալիլոյ նաւատորմի մը զրկելու լուրը սխալ է։ Միայն միջոցներ ձեռք առնուած են ի հարկին խոտլական հպատակները պաշտպանելու համար։ Այսինքն երկու զբաւաւոր զրկել Զմիւռնիա եւ Լամիոս որ պատրաստ զոնուին պէտք եղած պարագային մեկնելու։

ՊՈԼԻՍ, 22 Օգոստոս.

Հիւպատոս Ռուսթովի մարմինը յուղարկուողութիւնը եւ փոխադրութիւնը առջի օր տեղի ունեցաւ Մանիսթըրի մէջ։ Յիշատակելի գէպը մը չը պատահեցաւ։ Տեղացի քրիստոնեայք արգիլելուցան թուրք կառավարութիւնն յուղարկուողութեան մասնակցելու։ Ռուս հիւպատոսական փոխանորդը բողոքեց։

Սոքա ուրախ եւ զուարթ էին, լայց երբէք ու եւ խօսակցութիւն չէին ընե որ մի' գուցէ նաւապետն կասկածելով չողկնաւին Պուլղարիոյ նաւահանգիստներն հանդիպած միջոցին Տաճկաց ձեռքը մասնէր զիրենք։

Երբ Բիզէթէ լսածուեցաւ չողկնաւը, կարծես ամենքն ահաղ առեւանդեցին։ Իսկ Ռասկոյի տրագադրար կը յառաջանար գէպի Ռահօվա. երբ նոքա կը տեսնէին հայրենեաց զեղազուարճ դաշտերը, առաւել եւս կը զուարճանային առանց մտորելու իրենց մահը։ Սոյն մըջոցին Պոթէֆ իւր մօ' կը կոչէ իւր օգնականը Պրն. Տալիսօֆ, գրօշակակիր (Նաւթաւ ձուռնակէֆ, Վոյնօվաքի եւ Բօր Սալա. ասոնք խորհրդակցելով, Սալա քահանան իրեն պատգամաւոր կը զրկեն Ռասկոյի չողկնաւի առաջին նաւապետին որ առանց զիմադրելու չողկնաւին գէղը յանձնէ Պոթէֆի հրամանատարութեան որպէս զի կարողանան մ'կոյնելով ելնել հայրենեաց հողը։ Անձնուրաց քահ. նայն մօտենալով նաւապետին ամենայն քաղաքավարութեամբ հետեւեալ խօսքերը կարտասանէ պուլղարներէն շլեղուաւ. «Պրն. նաւապետ, յնուն Պուլղարիոյ աղատութեան կը ներկայանամ Ձեր Մեծպատուութեան իրեն պատգամաւոր Պուլղար վոյվոտային որ այս վայրկեան աստ կը զանուի ինքիսմօ Պոթէֆ անուամբ, նորա մի փոքրիկ առաջարկութիւնը ձեզ մատուցանելու համար»։ Նաւապետն շուարիալ կը պատասխանէ Բօր Սալայի թէ՛ ինչը սկի կուզէք, չեմ կարող հասկնալ ձեր միտքը։ Դահնայն դարձեալ կը յարէ. «Ըսել կուզեմ թէ ձեր չողկնաւի մէջ 300 հոգի Պուլղար երիտասարդներ կը գտնուին որոնց նպատակն է ձեր չողկնաւի օգնու-

թեամբ Պուլղարիա ելնելով Տաճկաց դէմ պատերազմիլ. մի քանի ժամի համար անհրաժեշտ պէտք է որ չողկնաւը մեղի յանձնէք, յետոյ դարձեալ ձեզի յանձնելու պայմանով. դուք դարձեալ պիտի կարողանաք որոշեալ ժամանակին հասնիլ թուրք նաւահանգիստներն»։ Առաջին եւ երկրորդ նաւապետք կը խորհրդակցին եւ կը պատասխանեն թէ այսպիսի բան մը ո՛ր լսուած է եւ թէ իրենց անկարելի է ընդունիլ այս ծանր եւ վախճաւոր առաջարկութիւնը։ ասի մեծ անպատուութիւն մըն է նաւապետաց համար եւ Ռասկոյի պատասխանատուութիւնը իրենց կը վերաբերի։ Սուր վրայ Բօր Սալա բարկութեամբ կը պատասխանէ. Յիշաւի այսպիսի բան մը մինչեւ ցարդ լսուած չէ, բայց այժմ պիտի լսուի եւ պիտի գործադրուի։ Եղիլութիւնը կերթայ կիւսացունէ Պոթէֆի. Պոթէֆ նշան մը կուտայ Պր. զինուորներուն, նոքա ալ մեքենաբար մատուկները բանալով գէնքերը կը հանին եւ իսկոյն ամենքն ալ գնիւնալ պտտաստ կը կենան կարգաւ. Պոթէֆ ձուռնէվօ եղած ասոնք գիտէր որ նաւապետը պիտի չընդունի իր առաջարկութիւնը, ուստի ինքը պատրաստած էր գերմաններէն լեզուաւ հետեւեալ նամակը որ մօտե նալով նաւապետին տուաւ զայն։

«Առ Պրն. նաւապետ Աւստրո-Հունգարական Ռասկոյի չողկնաւին։

«Այսօր, 18 մայիս 1875, հրամանատարութեամբ ինքիսմօ Պոթէֆի 300 անձնուրաց Պուլղարք աստ ներկայ կը գտնուին. մեր նպատակն է նախ չողկնաւը մեր հրամանատարութեան տակ առնուլ, յետոյ ելնել մեր սիրելի հայրենեաց հողը եւ թշուառ ու հարստահարեալ ազգ մը վայրենի մարդոց ճան-

կերէն ազատել. այն ազգի համար կըսեմ, որոյ հազարաւոր անգամ ցաւալի աղերսներն բոլոր Եւրոպիոյ առջեւ անլսելի մնացած են, եւ հաւայն ազգն է որ այսօր արեան մէջ մնացած, օգնութիւն կալեւկալէ. եթէ ձեր յօժար կամօքը մը հրամանին չիտնարիք, պատրաստ եմք բռնութեամբ եւ անքաղաքավարութեամբ վարուել ձեզ հետ։

Հրամանատար ԽՐԻՍՏՓ ՊՈԹԷՖ Օգնական ՏԱՎԻՏՅՈՅ

18 մայիս 1876

Առաջին նաւապետը նամակը կարգալէ յետոյ, ժողովով մը կը խոնարհի Պոթէֆի հրամանին. այն ատեն չողկնաւը իրենց հրամանատարութեան ներքեւ կառնեն, Վոյնօվաքի մեքենային զլուխը կանցնի, Ռասկոյի կսկսի յառաջանալ եւ Ռահօվաի ու Լօմ Բաւանքի մէջտեղ խարխիւ կը ձգեն. անմիջապէս երեք մակոյկներն իջեցուցին Դանուբի վրայ. Պոթէֆի խումբը կը լեցուէր մայրոյկներու մէջ. 5 անգամ երթեւեկելէ յետոյ ամբողջովին ելաւ Տաճկաց հողը. անդ երկրորդ եւ վերջին անգամ ահաւոր երգումներ կընեն հայրենեաց հողին վրայ մեռնելու. եւ եթէ միայն մէկ հոգի մնայ, դարձեալ առանց փախուստ աւելու պիտի պատերազմի թշնամեաց դէմ։

Շառուակեղի

